

25.05.2026թ.
N 032612



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲՈՍՓ» ՓԲԸ մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲՈՍՓ» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հնկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Մեդրակ Բադայան

Աուդիտոր

25 մայիսի 2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Օանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	107,820	95,699
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	115,923	154,564
Ոչ նյութական ակտիվներ		757	765
Հետաձգված հարկային ակտիվներ	6	13,603	14,546
		<u>238,103</u>	<u>265,574</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	407,416	401,378
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	735,422	1,172,560
Տրված փոխառություններ	9	18,536	28,449
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	477,781	312,681
		<u>1,639,155</u>	<u>1,915,068</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>1,877,258</u>	<u>2,180,642</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	11	70,100	70,100
Կուտակված շահույթ		917,462	429,324
		<u>987,562</u>	<u>499,424</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	12	58,357	137,114
		<u>58,357</u>	<u>137,114</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	53,193
Վարձակալության գծով պարտավորություն, ընթացիկ	12	34,637	38,876
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	773,458	1,359,881
Շահութահարկի գծով պարտավորություն		23,244	92,154
		<u>831,339</u>	<u>1,544,104</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>1,877,258</u>	<u>2,180,642</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մայիսի 22-ին:

Արմեն Բաղդրյան

Գործադիր տնօրեն



Գաղթնե Զախարյան

Գլխավոր շվապահ

Handwritten signature of Galstyan

1-28 ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԻՅՈՒՄ ԿԱՆՈՒՄ ԱՎՈՐՈՒՄ ԿԱՐԵՍՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՔԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	3,247,133	3,067,102
Վաճառքի ինքնարժեք	15	(2,130,114)	(2,095,136)
Համախառն շահույթ		1,117,019	971,966
Այլ եկամուտ		9,942	18,365
Իրացման ծախսեր	16	(100,840)	(142,621)
Վարչական ծախսեր	17	(457,815)	(286,212)
Այլ ծախսեր		(19,664)	(22,515)
Գործառնական գործունեությունից շահույթ		548,643	538,983
Ֆինանսական եկամուտ/(ծախսեր), զուտ	18	17,817	(36,440)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	19	7,610	(32,650)
Շահույթ մինչև հարկերը		574,070	469,893
Շահութահարկի գծով ծախս	20	(85,932)	(98,978)
Տարվա շահույթ		488,138	370,915
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		488,138	370,915

1-28 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	50,100	458,409	508,509
Տարվա շահույթ	-	370,915	370,915
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	370,915	370,915
Թողարկված կանոնադրական կապիտալ	20,000	-	20,000
Շահաբաժիններ	-	(400,000)	(400,000)
<i>Գործարքներ սեփականատերերի հետ</i>	20,000	(400,000)	(380,000)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,100	429,324	499,424
Տարվա շահույթ	-	488,138	488,138
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	488,138	488,138
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,100	917,462	987,562

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Տարվա արդյունք	488,138	370,915
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	56,440	52,423
Դեբիտորական պարտքերի պահուստ	(959)	9,267
Ֆինանսական ծախս	(17,817)	36,440
Շահութահարկի գծով ծախս	85,932	98,978
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(7,610)	32,650
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	604,124	600,673
<i>Փոփոխություններ՝</i>		
Պաշարներում	(6,038)	40,143
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	437,495	(1,053,468)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	(580,452)	687,193
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	455,129	274,541
Վճարված տոկոս	(7,217)	(15,321)
Վճարված շահութահարկ	(155,785)	(87,125)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	292,127	172,095
<i>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(28,115)	(29,643)
Փոխառությունների մարում/(տրամադրում), զուտ	9,913	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(18,202)	(29,643)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկեր և վարձակալություն	(108,310)	(40,975)
Շահաբաժինների վճարում	-	(400,000)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(108,310)	(440,975)
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ած/(նվազում)</i>	165,615	(298,523)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	(515)	(18,481)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկազմին	312,681	629,685
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	477,781	312,681